

ԲԱՌԱԽԱՂԸ Հ.ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Բառախաղը բառերի անսպասելի համակցություն է, որը հիմնված է արտասանական նույնության կամ նմանության և իմաստային տարբերության վրա. «Բառի կամ կապակցության այնպիսի փոխակերպություն է, որը տեղի է ունենում խոսքի մեջ դրանց նոր իմաստավորման կամ արտաքին նմանության հիման վրա տարբեր գաղափարներ նույնացնելու միջոցով, որ կատարվում է սրամտության նպատակով» (1.72): Բառախաղը սրամիտ արտահայտություն է, գործածվում է զվարճացնելու, կատակելու, հաճախ նաև հեզնելու ու ծաղրելու նպատակով: Ծիշտ է նկատված, որ «բառախաղի ֆունկցիաները բազմազան են՝ մերթ ծաղրել, խարազանել այս կամ այն երևույթը, մերթ խոսքը դարձնել գրավիչ, հետաքրքրաշարժ, մերթ էլ արտահայտել մարդու սրամտությունները, խորիմաստությունը» (2.68): Հ.Պարոնյանը վարպետորեն է օգտագործել բառախաղերը՝ նշանավոր անձերի գործունեության և հասարակական կյանքի մութ կողմերը բացահայտելու նպատակով:

Բառախաղը ձևավորվում է նույն խոսքի մեջ տարբեր նշանակություն ունեցող, այդ թվում նաև նմանահնչյուն բառերի և արտահայտությունների զուգորդման միջոցով: Այս ոճական հնարի գլխավոր պայմանը երկիմաստությունն է, երկակի իմաստ արտահայտելը: Բառախաղեր ստեղծվում են համաճեղքով, բազմիմաստ բառերով, հարանուններով, տարբեր իմաստ ունեցող բառերի նմանահնչունությամբ: Բառախաղեր ստեղծվում են ինչպես միևնույն, այնպես էլ հաջորդող նախադասություններում:

Բառախաղեր ստեղծելու պարոնյանական հնարների մեջ կարևոր տեղ է գրավում տարբեր գաղափարներ նույնացնելը խոսքի մեջ: Երգիծելու նպատակով գործածվում են բազմիմաստ բառերը: Բառախաղի՝ որպես երգիծական միջոցի ուժը կախված է նրանում արտահայտված մտքի խորությունից:

Մի շարք բառախաղերում կատարվում է բառի կամ կապակցության վերաիմաստավորում: Այսպես. ազգային ջոջ Թովմաս Ֆասուլճյանի փառասիրությունն ու սնապարծությունն է ծաղրվում հետևյալ բառախաղի միջոցով. «Քիչ ժամանակ անցնելեն ետքը Իզմիր գնաց, որ ամենայն հաջողությամբ կատարեց *Կույրին զավակը*: Այնչափ բնական *կույր* ձևացուց, որ համդիսականք բուռն ծափահարությամբ թատրոնը թնդացունին: Թովմաս այս ծափահարություններն քաջալերված՝ բավական ժամանակ *կույր մնաց*... յուր ուրիշ պակասությանց: Իզմիրի մեջ իր անունը սկսավ համբավ վաստկիլ, յուր տաղանդն *պայծառացավ*: Ասոր վրա ինքն ալ *պայծառացավ* օրիորդ *Պայծառին* հետ ամուսնանալով» (3,267): Այս օրինակում «կույր ձևացուց» կապակցության մեջ

կույր բառը գործածված է իր ուղղակի, բուն իմաստով, իսկ «կույր մնաց» կապակցության մեջ՝ «իրականությունը, ճշմարտությունը չտեսնող, անտեսող» իմաստով: Հեզնական իմաստով գործածված «տաղանդն պայծառանալ» կապակցության մեջ *պայծառանալ* բառն ունի *փառավոր դառնալ* իմաստը, իսկ «ինքն ալ պայծառացավ» կապակցության մեջ՝ *աշխուժանալ, զվարթանալ* իմաստը:

Հ.Պարոնյանը ծաղրի է ենթարկել հոգևոր գործիչ Սկրտիչ Տիգրանյանի գործունեությունը: Վերջինս գրել է «Հայելի գործոց» գիրքը, որը պարունակում է իր կյանքի կեղծ ու շատ դեպքերում չափազանցված պատկերներ: Եվ գրքի յուրաքանչյուր հատված դառնում է իրոք հայելի, որը ցույց է տալիս կերպարի բնորոշ գծերը՝ խաբեբայությունը, շահասիրությունը, ստախոսությունը. «1841-ին ծանծրանալով վանքին մեջ անգործ մնալե, ճամբա կ'ելնե Քյուրտստանի բարեկարգության համար, ինչպես կը գրե ինք յուր *Հայելի գործոցին* մեջ, *հայելի մը*, որ դժբախտաբար շատ լավ կը ցուցնե անոր պատկերը» (3.65):

«Հոսիոսի ծեռատետրուն» մերկացնում է «Ծաղկաքաղ» հանդեսը, ուր ոչ մասնագետը տալիս է գիտական, մասնագիտական տեղեկություններ բույսերի, ծառերի մշակության մասին ոչ մատչելի, խրթին լեզվով և ոճով՝ ոչ հասկանալի հասարակ ժողովրդին. «Ի՞նչ *պտուղ* քաղե քու *պտուղ* չորցնելու համար տված քարոզեդ՝ երբ նա ծառերու մշակության վրա չէ կարողացած ոչինչ» (4.387):

Կամ «-Հայրիկ, քերականությունն *ուղիղ խոսիլ* չ՞սորվեցներ:

- Այո, տղաս:

- Ինչու՞ ուրեմն լրագիրներեն ոմանք *ուղիղ չեն խոսիր*» (4.454):

Վերջին նախադասության մեջ արտահայտված «ուղիղ չեն խոսիր» կապակցությունը ըմբռնվում է արդեն այլ, նոր իմաստավորումով, այն է՝ ճշմարիտն խոսելու իմաստով:

Հ.Պարոնյանը ստեղծել է բառախաղեր տարբեր խոսքի մասերի պատկանող և տարբեր իմաստ ունեցող նույնարմատ բառերով: Այսպիսի բառախաղերը կազմվում են միաժամանակ այդ բառիմաստների հակադրման հիմունքով. «Են մարդիկ... բարձրանալու և ուրիշներեն *խոնարհեցնելու* համար *խոնարհությունը* գործիք ըրած են իրենց» (5.317): Հետևյալ բառախաղով իր ծաղրական վերաբերմունքն է արտահայտում ժամանակաշրջանի կրթության ու դաստիարակության նկատմամբ. «1938-ին մտավ *Ճեմարան*, ուր *Ճեմելեն* զատ բան չսորվեցավ» (3.53):

Հ.Պարոնյանի քաղաքական երգիծանքը ուղղված է հատկապես հոգևորականության դեմ: Մերկացրել է հոգևորական Ա. Հասունյանի ազգադավությունը, որը ստորոթյամբ աշխատում էր հայ կաթոլիկ համայնքը ենթարկել պապի գերիշխանությանը՝ զրկելով նրան ազգային դեմքից, ինքնուրույնությունից. «Երեկ չէ առջի օրը *հակահասունյանց* Սամաթիո եկեղեցին ալ *հասունցավ*:

Այժմ երկու *տհաս* եկեղեցի մնացած են իրենց քով, որոնց մասին է Բերայի Ոսկեբերանը (բերանը պագնեմ) և մյուսը՝ Միջագյուղի Լուսավորիչը. բայց շատ հավանական է, որ առջի օրվան անձրևին վրա անոցն ալ քիչ օրեն *հասունցան* և փրցվին» (4.299): Ինչպես տեսնում ենք, Պարոնյանը Ա. Հասունյանին ծաղրում է՝ օգտագործելով նրա ազգանունը:

Երգիծական, հեզմական բնույթ ունեն հատկապես հակամիշ բառերի մեծահնչունությամբ կազմված բառախաղերը: Ընդհանրապես որոշ բառախաղեր կառուցվում են հակադրության հիմքի վրա՝ ստեղծվելով հակամիշ բառերի հնչյունամանությամբ. «Սակայն եթե հագուստի մասին *վանողական* էր, դեմքի մասին *քաշողական* զորություն ուներ այս անձն» (5.30): *Քաշողական* բառը, որը ստեղծվել է *վանողական* բառի հակառակությամբ, ուժեղացնում է բառախաղի իմաստը: Այս բառախաղով «Մեծապատիվ մուրացկանները» վիպակում հեղինակը երգիծում ու տպավորիչ է դարձնում անմուսա բանաստեղծի կերպարը:

Հ. Պարոնյանը Ծերենցին ծաղրում է՝ նրան անվանելով մանուկենց. «*Ծերենցն* տակավին *Մանուկենց* է անձեր ստեղծելու արհեստին մեջ» (5.71): Բերայի կամանց ցուցամոլությունն ու պնդասիրությունն է ծաղրում հետևյալ բառախաղով. «Կիներեն շատերն այն ատեն միայն կը հագվին, երբ դուրս ելնել կամ հյուր ընդունիլ հարկ ըլլա. իսկ եթե այս հարկը *չներկայանա*՝ տան մեջ *գիշերազգեստով* կը պտղտին. արդյոք *ցերեկազգեստով* կը մտնեն անկողին» (5.188): Ծաղրում է Տոթքոր Ռուսինյանի հրատարակած «Ռիդլախոսություն» գրքույկը, աշխարհաբարի հարցերում ծուռ մոտեցումը. «Քանի մը չար մարդիկ *Ռիդլախոսության՝ Ծռախոսություն* անունը տվին» (3.273):

Նույն բառերի տարբեր զուգակցումներով կազմված բառախաղեր. «ՈՒստի մեջ կ'առաջարկենք որ փոխանակ վիճաբանությունը հիման վրա դնելու, հիմը վիճաբանության վրա դնեն, տակնուվրայություն մը ըլլալուն պես դարձյալ վիճաբանությունը վրա կ'ելլե և հիմը վրա կը մնա» (4.312): «Խտղտումի» մեջ այս բառախաղով խարազանվում ու ծաղրվում է եվրոպական դիվանագիտությունը, քաղաքական մթնոլորտում տիրող խառնաշփոթությունը: Բերենք այլ օրինակ. «Եթե այս *կիներն այր*, և իրենց այրերը կին ըլլային՝ անշուշտ Թարգմանչաց վարժարանն այսպես դժբախտ տեսնելու դժբախտություն չէինք ունենար» (5.107): Սերկացվում է միջագյուղցիների անհոգությունը վարժարանի վատթար վիճակի նկատմամբ:

Հաճախ բառը կրկնվում է որոշակի փոփոխություններով: Հեղինակը «Կսմիթներում» ծաղրում ու մերկացնում է մեծ տերությունների քաղաքական դիրքորոշումները. «*Չեզոքության մեջ գենք* կամ *գինյալ չեզոքություն*՝ աս ալ լսված բան չէր մինչև հիմա...» (4.82): «Պաղտասար աղբարում» կաշառված փաստաբանները ամեն միջոցի դիմում են՝ ամբարոյական կնոջը՝ Անուշի՜ն՝ ամենեղ ու բարոյական հռչակելու համար: Ահա, թե ինչպես է տրամաբանում

Օգսենը. «Մասնավորապես սիրելու *դիտմանը* մտած է հոն՝ թե *դիպվածով* սիրած է» (6.315): Փաստաբան Օգսենը այսպես թեթևամտորեն է մոտենում մարդու կյանքի ամենակարևոր մեկ հարցին. հեղինակի ծաղրը ուղղվում է Օգսենի, փաստաբանների լաիրշության ու տգիտության դեմ:

Արտաքին հնչյունական կազմով իրար նման և իմաստով անհարաբերակից հարանուհներով կազմված բառախաղեր. «*Պաղտատ* գացողը վերադարձած է, իսկ *Պալատ* գացողը վերադարձած չէ» (5.193): Ծաղրվում է Պալատ թաղամասի բնակիչների գինեմոլությունը, հյուրերին գինովցնելը, իրենց ճահիճը գցելը: Կամ «*Քաղաքականության մեջ քաղաքավարություն չկա*» (4.80): Մերկացվում ու ծաղրվում է մեծ պետությունների նենգադավ քաղաքականությունը: «Երկու տերով ծառա մը» կատակերգության մեջ Սարգրիտը արհամարհանքով ու ծաղրանքով է արտահայտվում ծառայի՝ կոմիկի մասին. «... բայց այն *Կոմիկը*... այն *կոպիտը*» (6.34):

Տարբեր բառերի արտաքին նույնացման միջոցով կազմված բառախաղեր.

«-Ի՞նչ *թյուրիմացություն*... աչքերովս տեսա...

Թյուրատեսություն ուրեմն» (6.364):

«Պաղտասար աղբարում» փաստաբանները փորձում են Պաղտասարի կնոջ անբարոյականությունը, եղածը ներկայացնել իբրև *թյուրատեսություն*: Այս բառախաղով ակնառու է դառնում Սուրի ցինիկությունը և Պաղտասարի կացության ողբերգականությունն ու կոմիկականությունը:

3. Պարոնյանը ծաղրում է Աբիսողոմ աղայի մեծախոսությունը, խոսքի և գործի հակասությունը. «Ո՛վ *մեծագործություն*. Ո՛վ *մեծախոսություն*» (5.75):

3. Պարոնյանի ստեղծագործություններում հանդիպում ենք այնպիսի բառախաղերի, երբ առաջին եզրում գործածված բառը երկրորդ եզրում կրկնվում է որոշակի փոփոխությամբ՝ մեկ հնչյունի ավելացումով կամ անկումով: Դեղինակը գրական միջակությունների նկատմամբ իր արհամարհական վերաբերմունքն է արտահայտել: «Պուետները» դերձակի նման կտրում են բառերի գլխից, մեջքից, պոչից. «Մեր լեզվին բառերն անկարելի է ճանաչել անոնց ոտանավորներուն մեջ. *ասելը սելի* կը փոխվի. *նվերը* երբ ոտանավորի մեջ ներկայանալ ուզե, գլուխ կը բանա և *վեր* կը մտնե հոն» (3.130): Բառախաղի հեզմական իմաստը ուժեղացվում է երկրորդ եզրում նույն բառի մեջ առաջին հնչյունի անկումով (ասելը-սել, նվերը-վեր): Դաճախ կատարվում է հակառակը. «Բայց տես, կռմակս ալ կ'ելնեն կը նստին: *Պոգ* չէ, խեղճ բեռնակիրները *հոգի* չունի՞ն» (5.132): Դաճախ բառի մեջ կատարվում է մեկ հնչյունի փոփոխություն. «Ոչ լուր ունիմ և ոչ մուր» (6.46):

Սի շարք բառախաղեր հանգում են պարադոքսի: Պարոնյանի գրիչը գիտե կամթել ու ծաղրել: Իր մասին հեղինակը գրում է. «... այս թերությունս իմ առավելությունս է, վասնզի այս թերությանս շնորհիվ է, որ կրցած եմ քանի մը

ընթերցողներու տեր ըլլալ, թերութիւն, որ թերութիւններ ուղղելու պաշտօնն ունի» (5.73): Բերենք մեկ այլ օրինակ. «Չկա մեռալ մը որուն ինչ հիվանդութենէ մեռած ըլլալն չհասկցվի, ինչպէս որ չկա հիվանդ մը, որուն ինչ հիվանդութենէ բռնված ըլլալը հասկցվի (4.421): Այս բառախաղով «Յոսիոսի ծեռատեսորում» ծաղրի է ենթարկում ժամանակի բժշկութիւնը, կիսազրագետ ու տհաս մտավորականներին ու գիտականերին:

Բերենք այնպիսի բառախաղեր, որոնք ստեղծվել են ասածի շրջումով. «Արդ, ով որ աքսորվելու հարմարութիւն ունի՝ պետք չէ որ ոստիկան ըլլա, և փոխադարձաբար, ով որ ոստիկանութեան հարմարութիւն ունի պետք չէ որ աքսորվի» (4.300): Այս բառախաղով «Խտղտումի» մեջ ծաղրում է ոստիկանի գործունեութիւնը: Հ.Պարոնյանը «Լուսարարի նամականերում» իր սկզբունքների մասին գրում է. «....Դուք ալ պիտի համոզվիք՝ թէ մարդերու թերութիւնները տեսնելու համար է որ չեն սիրեր զանոնք և ո՛չ թէ զանոնք չսիրելու համար անոնք թերութիւնները միայն կը տեսնեն» (4.483):

Հ.Պարոնյանը ստեղծել է հակադրութեան այնպիսի ձևեր, երբ մի եզրում արտահայտված միտքը շրջվում է հաջորդ եզրում: Այս դեպքում ենթական ու ստորոգյալը կապված են լինում միևնույն գործողութեամբ: Հակադրութիւնը առաջանում է ենթականի և ստորոգյալի խնդրի ու պարագայի փոխադրումով, այսինքն՝ հակադիր եզրում ենթական դրվում է խնդրի, իսկ խնդիրը՝ ենթականի տեղում: Օրինակ. «Իրավ է, որ շատ աղքատներ առանց բժշկի կը մեռնին. բայց ո՞րչափ բժիշկներ ալ կան, որ առանց հիվանդի կը մեռնին» (4.382): «Այսօր ստուգվեցա՞վ, որ գողութեան հեղինակն ոստիկանն է եղեր... Ի՞նչ փոփոխութիւն... ատեն մը ոստիկանները կը ձերբակալեին գողերը, իսկ այժմ գողեր կը ձերբակալեն ոստիկանները» (4.400): «Լա՛վ տնօրինութիւն մ'է աս. փոխանակ գողերը բանտ տանելու՝ բանտը տանելու է գողերուն» (4.356):

Այսպիսով՝ բառախաղը, որ առաջին հայացքից կարող է ընթերցողին ժպիտ պարգևելու միջոց թվալ, իրականում Պարոնյան երգիծաբանի վարպետ գրչի տակ դարձել է երգիծանքի ոճավորման կարևոր հմար՝ ընթերցողի ուշադրութիւնը կյանքի ցավոտ կողմերի վրա հրավիրելու, այդ երևոյթներն ավելի տեսանելի դարձնելու, արատները մերկացնելու, վերացնելու համար: Գրականութիւն

1. Ժ. Մ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտութեան հիմունքներ, Երևանի համալս. իրատ., գիրք 2, Ե., 1991:

2. Գ. Վահանյան, Հայոց լեզվի ոճաբանութեան ձեռնարկ, Հայպետլուսմանկիրատ., Ե., 1956:

3. Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 2, Հայկ. ՍՍՌ ԳԱ իրատ., Երևան, 1964:

4. Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 4, Հայկ. ՍՍՌ ԳԱ իրատ., Երևան, 1965:

5. Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 3, Հայկ. ՍՍՌ ԳԱ իրատ., Երևան, 1964: